



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ. Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 ,
darpas.lori@mta.gov.am

N 126
13 հունիս 2017թ.

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 34, 35 որոշումները և թիվ 2, 3
կարգադրությունները:

Առդիր՝4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Արմեն Ալոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 34

Հ.Ա.ՋԵՅՐՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշատանքային օրենսգրքի 156,158,159,161 հոդվածների, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումով և հաշվի առնելով Հ.Ա.Ջեյրոյանի դիմումը՝

Որոշում եմ.

1. Դարպասի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հերմինե Ալբերտի Ջեյրոյանին տրամադրել 2017թ-ի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները ս/թ հունիսի 12-ից մինչև հուլիսի 14-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր:
2. Հերմինե Ալբերտի Ջեյրոյանին հիմնական արձակուրդային վճարից բացի, վճարել լրացուցիչ միանվագ դրամական պարգևատրում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:
3. Հերմինե Ջեյրոյանի արձակուրդում գտնվելու ժամանակ փոխարինող նշանակել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Արթուր Աբրահամյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. _____
գ. Դարպաս





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 35

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 48-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դարպաս համայնքի 06-033-065-004 ծածկագրի, 0.10 հա սեփական տնամերձ հողամասին տրամադրել 6 փող, 6 նրբ, 17 փոստային հասցեն:
2. Դիմել ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը, փոստային հասցեն գրանցելու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

20 __ թ. _____
գ. Դարպաս





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

07 ՀՈՒՆԻՍԻ 2017 թվականի N 2

**ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 5-Ա
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով և համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07-ի թիվ 14-Ա որոշմամբ՝
Կարգադրում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016 թվականի փետրվարի 11-ի « Հանձնաժողով կազմելու մասին» թիվ 5-Ա կարգադրությունը:
2. Կարգադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ



20 __ թ. _____
գ. Դարպաս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

13 ՀՈՒՆԻՍԻ 2017 թվականի N 3

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնքալառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , համաձայն «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» թիվ 947-Ն որոշման պահանջների և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝

Կարգադրում եմ.

1. Դարպաս համայնքում կազմել բնակարանային պայմանների գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

- Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ալոյան
- Անդամներ՝ Դոնարա Վարդանյան
- Արթուր Աբրահամյան
- Արմեն Ասլանյան
- Լյուբա Աբրահամյան

2. Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Բնակարանային պայմանների գնահատող հանձնաժողով կազմելու մասին» թիվ 21 կարգադրությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ